

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ապրիլ 7-14ի օրերը Հայ երուսաղէմի համար եղան խանդավառ ու ոգեշնչող օրեր: 1967 թուականէն ասդին քաղաքական իրադարձութեանց հետեւանօք խմբային ուխտագնացութեանց ալիք դէպի Հայ երուսաղէմ հանգած էր: Հիմ օրերու փառքին կարօտ երուսաղէմացիք գրեթէ քառասուն տարի յետոյ կարծէէ նորակնունք կը դառնային հայ ուխտաւորներու աղօթքի ներկայութեամբ՝ Հայ երուսաղէմ ուխտի այցելութեամբ: Սրբոց Յակոբեանց Մայրավանքը անօրինակ ուրախութեամբ կը լեցուէր Ամերիկայէն, Գանատայէն, Ֆրանսայէն եւ աշխարհի տարրեր շրջաններէն երուսաղէմ ժամանած հայ ուխտաւորներու մոմավառութեամբ: Աղօթահրաւէր Սրբոց Յակոբեանց վանքը ուխտաւորաց համար կը դառնար հաւատքի կենսաւորման աղբիւր: Հոգեպարար ու սրբազան արարողութեան նոխտեան մէջ կը վերամկրտուէր հայու հոգիքն: Անբացատրելի կը թթխմորէր բոլորիս հաւատքի կեանքին մէջ: Անտեսանելի Աստուած՝ մեր քայլերը կ'առաջնորդէր մեր Հայոց հաւատքի կեանքին հետ հաղորդակցութեան: Հնարոյր, բայց ոչ հնացեալ Սրբոց Յակոբեանց վանքի պատերուն մէջէն նոր ժայն մը կը լսուէր, որուն մէջ ուժականացած՝ նոր տեսիլքով մը կը լեցուէր բոլորիս հոգեւոր կեանքը: Դէպի Նոր երուսաղէմ: Մեր կեանքին մէջ կը թթխմորուէր երուսաղէմը, կը դառնար Նոր երուսաղէմ ու կը նորոգուէր մեր մէջ հին մարդը:

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ

ՇԵՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

Քրիստոսի Մենդեան 2001 ամեակին առիթով, շնորհաւորանքի գիրքը եւ հեռագրեր առաւուցան Հոգեւոր ու Կառավարական պետերուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագիրքը ստացած է Պատրիարք Սրբազան Հայրը.-

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ս. Օծուխին Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին.
- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսին.
- Հոռմէական Կաթողիկ եկեղեցւոյ Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապին.
- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալէէսէյ Բ. Սրբազան Պատրիարքին.
- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Բ. Մութաֆեան Սրբազան Պատրիարքին.
- Յորդանանի Վսեմ. Ապտուլլահ Բ. Թագաւորին.
- Գալուստ Կիլիկեան Հիմնարկութեան Նախագահ Տէր. Միխայէլ Եսայեանին.
- Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն.